# ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

## ՔԱՆԴԱԿՆԵՐ

### ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

### ԵՊԻՓԱՆԻ ԽՈՏԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Եպիփան՝ Ծոփաց մեծ ճգնաւորն էր,
Շուրջն ունենալով շատ հետեւողներ:
Երբ օր մ'անոնց հետ այցելել կ'երթար
Յունական վանք մը՝ լոկ ուխտի համար,
Ճամբուն վրայ պատահեցան
Կընոջ մ' իրօք ազնուական:
Փորձելու համար բարքն իրեններուն՝
Գովեց Եպիփան անցորդն այդ սիրուն.
Եւ ըսաւ՝ թէ Շա՛տ գեղեցիկ էր ան.
Հասակն էր շքեղ, ու տեսքն անընման...
Իր այս խօսքերէն խրախուսուած տակաւ՝
Մանուկ ճգնաւո՛ր մը դիտել տուաւ՝
Թէ այդ կինը գեղանի
Կին մըն էր միականի:
Զայրացա՛ծ՝ Եպիփան դարձաւ դին այդ եղբօր.
Արտաքսեց զայն իսկոյն իր խումբէն հոգեւոր,
Սաստելով. «Ուրե՛մն համարձակեր ես
Այդպէս նայելու կընոջ մը երես»:

(ՓԱՒՍՏՈՍ)

---

### ՔԱՅԼԵՐՈՒ ՎԱՐՁՔԸ

Անապատի ծեր մը, որուն
Քըսան մըղոն խուցն էր հեռուն
Աղբերակէ մը, ամէն օր
Ջուր կը տանէր անկէ գնացքով տաժանաւոր.
Ա՛լ ձանձրացած՝ իւրովի
Ըսաւ. Ինչո՞ւ այս աշխատանքն ընեմ այսպէս,
Լաւ չէ՞ որ գամ ու բնակիմ ես
Այս ջուրին մօտ, որ չըզգամ տապը ծարաւի,
Ու ծունկերս ալ չը շըլմորին
Ծանըր բեռան տակ սափորին...:

digitised by A.R.A.R.@